

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցին. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Ասմ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ պրօֆէսօր

ԱՆԳՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

մարմինը Գերմանիայից սեպտեմբերի 29-ին բերվեց Թիֆլիս և դրված է
Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում. Հանգուցեալը պէտք է թաղվի նոյն
գերեզմանատանը, Գրիգոր Արծրունու կողքին: Թաղումը տեղի կունենայ վաղը՝
Հինգշաբթի, հոկտեմբերի 1-ին: Պատարագը կըսվի առաւօտեան ժամը
11-ին: Թաղումը ժամը 12 1/2-ին: 1—2

Դանիէլ և Մինա Հարունեանները, Աննա և Մանուէլար Աւագեան-
ները և Արշակ Օհանեանը ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթ-
ներին առաջինը և երկրորդը իրանց լիակազմի սրտով, երրորդը իր եղբոր և վերջինները
իրանց աներորդու:

Գ Ա Ր Ի Է Լ Դ Ա Ն Ի Է Լ Ե Ա Ն Հ Ա Ր ՈՒ Ն Ե Ա Ն Ի

մահը, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 28-ին, Թիֆլիսում: Ամբօքը կը կատարվի սեպ-
տեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 6-ին, «Ս և Եր»-ի նօմէրներում: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործնական գէնը.—ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Աստղաբանից. Նամակ Վաղարշապա-
տից. Նամակ Էջմիածնից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անկարգութիւններ Պա-
րիզում. Կրեմլական հարցը. Չինական գործերը.
Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—
ՀՅՈՒԱԳՐԱՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Արդիւնաբերական մի նոր հարց.
Մաքու:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՆՔ

Լուծէրի ժամանակ Գերմանիայում ա-
տում էին. Քիւրքերի դէմ կուռելու հա-
մար հարկաւոր չէ Կ. Պոլիս գնալ, պէտք
է միայն անցնել Սպանիա սարերը, մտնել
Իտալիա և դիմել Հռոմ: Կրօնական վերա-
նորոգութեան գործիչները, որոնց համար

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՐԿԻՒՆԱՐԵՐԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ՀԱՐՑ

(Նամակ Ալեքսանդրօպօլից)

Կարում ապրող ալեքսանդրօպօլի վաճառ-
ականները մէջ այս տարվայ սկզբին մի գեղեցիկ
միտք զարթոնեց—կազմել մի ընկերակցութիւն և
հատարական ոյժով արդիւնաբերական գործի
ձեռնարկել Բագուի մէջ նաւթի հողեր ձեռք բե-
րելու և շահագործելու նպատակով: Այդ հարցը
ընդհանուր խօսակցութեան և հետաքրքրութեան
առարկայ դարձաւ թէ՛ Ղարսում և թէ՛ Ալեք-
սանդրօպօլում և մի չք տեսնելով, արտաքին
կարգի ուղեորութիւն առաջ բերեց մեր մանր
զրամադներին մէջ, որոնց առաջին և ամենա-
մեծ ցանկութիւնն էր, որքան կարելի է շուտ
հարստանալ և անպատճառ մի մեծ աշուղտեան
հանդիպել և միանգամայն ապահովել իրանց ա-
պագայ սերունդի բաղաւորութիւնը: Առ այժմ,
որքան մեզ յայտնի է, մտադրութիւն կայ գտնել
500 անդակների իւրաքանչիւր 500 ռ. վճարող.
գումարը լինելու է 250,000 ռուբլի, որից յետոյ
պէտք է ձեռք զարկն կանոնադրութիւն կազ-
մելու, իրաւունք ձեռք բերելու և իսկույն գործի
ձեռնարկելու: Աշուղտութիւնը, ի հարկէ, ապագայի
գործ է: Առ այժմ հարկաւոր ենը համարել
վաղօրօք բացատրել և արժարժել արդիւնաբե-
րական մի նոր հարց, որը մեր կարելի է աւելի
ձեռնառու, աւելի գործնական և աւելի շահաւէտ
է իր ընդհանուր բնաւորութեամբ, իսկ մեր դա-
ւառի համար կենսական է և ամենակական իր
հետեւանքներով: Արդէն մի քանի տասնեակ տա-
րիներ է, որ Ալեքսանդրօպօլի և Կարսի վաճա-

խաժանական բռնապետութիւնը և պապա-
կանութիւնը մի և նոյն չարիքն էր, սաս-
տիկ սխալված էին: Նրանց այժմեան սե-
րունդը հակառակ է երգում. «Թիւրքերին
փայփայելու համար նախ քան Կ. Պոլիս
գնալը պէտք է անցնել Սպանիա սարերը,
մտնել Իտալիա և դիմել Հռոմ»: Սպաշտ
թեւադրում է մեր գործնական դարը: Նե-
րաւ, եթէ որդիները սրբութեամբ կա-
տարէին իրանց հայրերի ուխտը, ինչպէս
այսօր Գերմանիան նստած կը լինէր Չի-
նաստանում: Կաթօլիկները գերմանական
բռնեցքի համար ճանապարհ բացին դէպի
երկնային պետութեան սիրտը. նոյն կա-
թօլիկները կարող են և մի չաղ կտոր
կարել այն քաղաքական դիակից, որի ա-
նունն է Թիւրքիա: Պարզ է ուրեմն, որ
այժմ պէտք է Հռոմ գնալ ոչ իբրեւ կուռղ

ուսկաններին յայտնի է, թէ Բագուի մէջ նաւթը
գոյութիւն ունի և մի քանի անհատներ, ընկե-
րութիւններ արդիւնաբերել են ահալին բռնա-
կութեամբ այդ հեղուկը և մեծ հարստութիւն
գիրդել: Բագուն մի Աւետեաց երկրի է մեր բո-
լոր գաւառացիների համար, բայց մեր վաճա-
կանները մինչև այսօր ոչինչ ուշադրութիւն չէին
դարձնում այդ գործի վրա, մինչդեռ օտար երկ-
րացի զբաղմունքները հարստութիւնը յափտա-
կում էին այդ երկրից: Բայց հէնց որ մեր քա-
ղաքացի վաճառական Մկրտումեան այս տարի
գնեց Բագուի մէջ հող և նաւթ ստացաւ, այդ
պատահական աշուղտութիւնը միանգամայն ցնդեց
մեր վաճառականներին, որոնք առանց երկար
մտածելու, ձեռք զարկին կազմակերպելու մի
ընկերութիւն՝ անպատճառ Մկրտումեանի բաղ-
դին հասնելու: Երողութիւնը գտնէ այդ է ցոյց
տալիս և մենք հիմք ունենք կարծելու, որ Կար-
սի վաճառականների այդ ձեռնարկութիւնը
գրտակցութեան արդիւնք չէ, այլ բոլորակաւ
ոգևորութեան հետեւանք, որը, ի հարկէ, չէ կա-
րող իրապէս գործի աշուղտութեանը ծառայել:
Գանի որ ընկերութեան մասնակցելու համար
գտնված են բազմաթիւ մանր վաճառականներ,
մենք պէտք է յիշենք, որ նաւթ-արդիւնաբերու-
թեան գործը նախ ընկնի և ապա ամենակատա-
րեալագործված և փորձված առեւտրական-արդիւ-
նաբերողների գործ է, և պահանջում է աւելի
մեծ դրամագլխի գործադրութիւն: Եթէ Բագուի
մէջ բազմաթիւ վաճառականներ ահալին հարս-
տութիւններ են գիրդել, շատ շատերն էլ վնաս-
վել են բոլորովին և հիմնովին քաղաքակը են
նրկթապէս և կորցրել նոյն իսկ իրանց կեանքը.
եթէ ամեն մի տեղից և ամեն մի հոր փորելուց
կարելի լինէր նաւթի չեքտ գտնել, անկասկած
Բագուն այժմ այնքան ծակծկված հորեր կունե-
նար, որ մի օր գուցէ կարող էր լինել ծովի

դէնուոր, այլ իբրեւ ջերմեանի ուխտաւոր:
Երազելով կայսերական ճանապարհոր-
դութիւնը դէպի Երուսաղէմ, գերմանական
կառավարութիւնը ջերմեանի ուխտեր
կատարեց Հռոմում: Ս. Պետրոսի աթոռից
նա նշանաւոր ակնկալութիւններ ունէր:
Արդու-Համբիլի հետ եղբայրական կապա-
կցութիւն հաստատելուց առաջ պէտք էր
Թիւրքիայի սահմաններից դուրս վնդռել
Փրանսիական ազդեցութիւնը և նրա ժա-
ռանգը հանդիսանալ ձեռք բերելով կա-
թօլիկութեան պաշտպանի և հովանաւորի
իրաւունքը: Զէ՞ որ այդ գերը այնքան շա-
հաւէտ էր Չինաստանում: Բայց ինչպէս
երևում է բոլոր տեղեկութիւններից, Հռո-
մի աթոռը խուլ մնաց իր ոգևորված ուխ-
տի միմեծների դիմաց. պապը այս
անգամ Վատիկանի զինանոցը փակեց դիպ-
լոմատիական քաջամարտիկ ասպետութեան
առաջ և սրան մնում է յոյս դնել միայն
ուղղահայեանների խալիֆի բարեհաճու-
թեան վրա...

Մի տարուց աւել է, աշխատում են
ձեռք բերել կաթօլիկութեան պաշտպանի
մենաշնորհը, խօսում, վիճում են նրա մա-
սին: Դիպլոմատիան ահագին նշանակու-
թիւն է տալիս այդ հարցին և Գերմա-
նիայի անաշուղտութիւնը համարվում է խո-
շոր պարտութիւն: Բայց ի՞նչ է նշանա-
կում կաթօլիկութեան պաշտպան լինելը:
Թիւրքիայում գործող եղբուկները իրանց
զոհերին հաւատացնում են, որ դա նշա-
նակում է թէ՛ կաթօլիկ ռալեան գտնվում
է կաթօլիկ պետութիւնների հսկողութեան
և պաշտպանութեան տակ և ոչ ոք չէ
կարող դիպչել նրա մազին անգամ: Պէտք
է խոստովանել, որ Թիւրքիայի պէս մի
երկրում կաթօլիկ պրօպագանդան հազիւ
թէ այդ բացատրութիւնից աւելի գրաւիչ
մի գործիք գտնէր: Հարց է թէ՛ ո՞րքան
ձգձարտութեան կայ կաթօլիկ կրքեր այդ
բացատրութեան մէջ:

Արեւելեան հարցի պատմութիւնը մեզ
ցոյց չէ տալիս, որ կաթօլիկութիւնը կա-

րողացած լինէր մի առանձին բացառիկ
գրութիւն ստեղծել թիւրքահայատակ կա-
թօլիկների համար: Զիշո՞ք է, կայ Լիբա-
նանը, բայց ո՞վ կարող է հաստատել, թէ
Նապօլէօն III-ին Լիբանանի հարցում մի-
մայն կաթօլիկութեան գաղափարն էր ա-
ռաջնորդում: Եթէ վերջին տարիների զար-
հուրելի դէպքերի ժամանակ՝ երբ թիւր-
քական գաղափարութիւններն զոհ գնացին
նաեւ շատ կաթօլիկ թիւրքահայատակներ,
Պրանսիան բաւականացաւ իր հանդիսատեսի
և Թիւրքիայի բարեկամի դերով, ոչնչով չը
գանաղանկելով Գերմանիայից, դա միայն
այն էր ապացուցանում, թէ քաղաքակա-
նութեան համար կրօնակցութիւնը շատ
մեծ արժէք ունի: Մի ուրիշ ապացոյցն
էլ այն է, որ Հռոմի աթոռը և Թիւրքիա-
յում գործող կաթօլիկ հոգևորականու-
թիւնը թիւրքական ընթերցող պաշտպաններն
են: Անոն XIII, ինչպէս յայտնի է, բաւա-
կանացաւ միայն պատմական ցաւակցու-
թիւններ յայտնելով, իսկ Ազաբեան պատ-
րարքը նորեւնում մի տխուր և թշուառ
գրութեամբ աշխատեց ապացուցանել, որ
Թիւրքիայի ռալեան միայն իր ստրկական
մեղութեան մէջ կարող է փրկութիւն
գտնել: Բայց և այնպէս, մէջտեղ կայ և
զոյրութիւն պիտի ունենայ կաթօլիկներին
հովանաւորելու իրաւունքը: Ի՞նչ է դա:
Գերմանիայի միսիոնարները Չինաստանում
կաթօլիկութիւն էին տարածում և ա-
հա՛ նրանց գործը մի միջոց դառաւ,
որ Գերմանիան չաղ պատաններ խլէ երկ-
նային պետութիւնից. մի և նոյնը և
Թիւրքիայի վերաբերմամբ: Կրօնը քաղա-
քական յափշտակութիւնների ճանապարհ-
ներ է բաց անում մեր դարում: Բայց
նոյն կրօնը արդեօք կարողանում է մարդ-
կային իրաւունքներ տալ նրան դաւանու-
ղին, կարողանում է պաշտպանել բռնու-
թիւնները, տառապանքները: Այդ հարցի
վերաբերմամբ կասկած յայտնելու համար
մենք բաւական պերճախօս, արեւնոտ փա-
տեր ունենք վերջին ժամանակներից: Եւ

երկրներ, և մենք տասնապատիկ լիակազմ
նորից գնում ենք օտարներէ: Այդպէս է և
կոտաւտի առեւտուրը, երբ մեր երկրի օտար
քաղաքներից է ստանում ձէթը և այն էլ լիակա-
զմով: Նոյնը պէտք է առնել քաղաքների և
այլ արդիւնաբերական ձեռնարկութիւնների վե-
րաբերմամբ, որոնք արժամարկված են մեր տե-
ղացի դրամատէրերի կողմից:

Եթէ կարեցի և ալեքսանդրօպօլի վաճառա-
կանները կամեցում են անպատճառ մի մեծ
գործի ձեռնարկել, անուն և հռչակ վաստակել,
անաղին չա՛հ ստանալ, առաջարկում եմ մեր
երկրացիներին արդիւնաբերական մի նոր գործ,
որը իրապէս մեծ է իր բազմակողմանի շահա-
ւէտութիւններով և ունի մեծ ապագայ. նոյն իսկ
նրկթական հաշուի կողմից էլ աւելի յուսալի է
քան թէ Բագուի մէջ հող գնելը, հոր փորելն ու
անյայտ բաղդի ուսուցելը: Ալեքսանդրօպօլի և
Կարսի սահմանների վերջում դէպի Երևանի և
Կողբի սահմանների մօտ կայ Զարնայի կամ
Սարգաթաբաղի դաշտը, որը ունի 300,000 դե-
սետարին տարածութիւն հրաշալի հող և այժմ
անմարդաբնակ է և անապատ, ջրի պակասու-
թեան պատճառով, և ոչինչ օգուտ չէ տալիս
ոչ կառավարութեանը, ոչ էլ երկրին: Զը նայած
որ Արփա-չայը և Կարս-չայը անցնում են այդ
հողի միջից, բայց ցած ընկած դրութեան
պատճառով ոչինչ օգուտ չեն տալիս այդ հողե-
րին: Հին ժամանակներում այդ դաշտն ունեցել
է կանոնաւոր ջրանցք, որի հետքերը այժմ էլ
նշմարվում են Տէր-Պետրոսեանի քաղաքից նե-
րս և ամենայն հեշտութեամբ կարելի է այդ
գետերի ջրով ոռոգել այդ դաշտը: Եթէ գնե-
րալ Կալանովի ջրանցքը կարողացաւ կենդանու-
թիւն տալ Դուլին—Արտաշատի դաշտին—և Ե-
րասխը օգտակար դարձաւ Երևանին, ինչո՞ւ Ա-
խուրեանը պէտք է ի դուր տեղը կորչի, մատ-

Հենց այդ է պատճառը, որ նոյն իսկ Գերմանիան, մի բողոքական պետություն, Քիւր-բրայի հզոր աջակցը, ուզում էր ձեռք բերել կաթոլիկության հովանաւորող դերը: Կարող ենք վստահ լինել, որ այդ դերը Քիւրբրայի կաթոլիկ ռայեայի համար չէր որոնվում, որովհետեւ բարեկամը չէր կարող իր բարեկամին ջլատել, նրա ընթերցումը դեռ զարաւոր արիւնահեղ հարցը, որ այդ ռայեայի իրական պաշտպանութեան համար կաթոլիկութիւնը մի լաւ խաղաթուղթ էր, որով շատ բան կարելի էր շահել յօգուտ Գերմանիայի: Եւ միթէ այժմեան գերմանացիներին այդ պատճառով չեն ների լուծելի ժամանակակիցները, որոնք ստում էին, թէ Քիւրբրայն պէտք է ջրաղել ոչ թէ Կ. Պօլսում, այլ Հոսովում...:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱՅԻՆՑ

Սեպտեմբերի 10-ին

«Մշակի» № 153-ի մէջ՝ պ. Յ. Սօլ. դատաւարաւոր մեր օրիորդները՝ իբր թէ ոչ քննական հայեացքով վերաբերվելը դէպի ամուսնական խնդիրները, դատաւարաւոր է նրանց և յորդոր է կարգում լուրջ վերաբերվել այդ խնդիրներին: Ընդունենք մի րօպէ, որ յօդուածագիրն իրաւացի է նկատում, և մեր օրիորդները՝ երիտասարդները թէ կրթութեամբ և թէ լուրջ բնաւորութեամբ բարձր լինելով՝ հանդերձ՝ շատ թեթեւ են վերաբերվում ամուսնական խնդրին և իսկապէս ընտրելի ամուսնիւնների միջից գերազատում են հարուստին՝ ուշադրութիւն չը դարձնելով որա ակնյայտ պակասութիւնների վրա: Ասացէք խնդրեմ, հասարակութիւնը երբ տուեց նրանց ընտրելի ամուսնիւններ և նրանք ոչ-հարուստ լաւը թողած, ընտրեցին վատը, բայց հարուստը: Մինչև անգամ եթէ նրանք այդպէս էլ վարվին, ո՞վ է մեղաւորը. կանայք թէ տղամարդիկ: Աղջկան ծնված օրից ամեն կերպ կաշկանդում ենք, զրկում ենք նրան իր համար ապրուստի միջոց գտնելուց. համոզում ենք նրանց մեր վարմունքով, որ նրանք ծանր բեռն են ընտանիքի համար, որ նրանց միակ կոյտմն է մարդու գնալը. դուզում, դարդարում ենք նրանց՝ տղամարդկանց աչքին գեղեցիկ և դուրեկան երեսնելու համար, որպէս զի աւելի հեշտ լինի նրանց մարդու տալը. նրանց առաջադիմական իրաքանչիւր քայլին ծուռ աչքով ենք նայում ու անտեղի ակնարկներով վարձատրում, և այդ բոլորից յետոյ դարձեալ պահանջում ենք, որ օրիորդը լաւ ընտրութիւն անէ:

Նկով երկիրը աղքատութեան և հողը ամայութեան: Մեր հաւաքած տեղեկութիւնները հաստատում են, որ այդ դաշտը ջրաբեր անին անկարելի բան չէ. պէտք է թուժք կապել գետերի առաջ. ջուրը բարձրացնել և առուներով տարածել դաշտի մէջ. այդ գետերի ջուրը բաւական են արդաստանը անելու գոնէ դաշտի կէսը՝ 150,000 դեկտարին տարածութիւն և մի նոր գաւառ տեղեկել, չէն և բարեկեցիկ ժողովուրդներով: Արդիւնքը անհոն է: Տեղեկակ մարդիկ հաւատացնում են, որ այդ գիւղերի առաջ թուժք կապելու և ջրանցք չինելու գործը պահանջում է մօտ 200,000 ր., և հնարաւոր է: Այդ նպատակով երբեմն մի քանի անգինը դիմում են արեւ կառավարութեան, բայց դրամագլխի քլոթիւնը միշտ խափանել է գործը: Ասում են, որ այդ ջրանցքի յատակաւոր, չափերը արդէն կատարված են կառավարութեան կողմից, բայց դրամագլխի և գործի կաշոյ մարդկանց բացակայութիւնը արգելք է եղել շարունակելու: Այժմ յարմար առիթ է այդ հարցը նորից արծարծելու և, եթէ կարելի է, իրականացնելու, քանի որ, ինչպէս յայտնեցինք, կարծես լիաճառականներն արդէն կազմել են ընկերութիւն և ունեն պատկառելի դրամա-գլուխ: Արդեօք յարմար չէ մեր վաճառականներին (Կարս-Ալեքսանդրոպոլ) միանալ այդ գործի մէջ և փոխանակ Կասպից ծովի ափերը փորելու, չինել այդ ջրանցքը, որ մեծ շահ կարող է տալ թէ ձեռնարկողներին, թէ երկրին ու ժողովրդին և թէ նոյն իսկ պետական գանձարանին: Այդ օգուտները ակնյայտ են. հարկը պահանջած ժամանակ մենք կարող ենք ապացուցանել, որ մեր առաջարկած գործի շահաւէտութիւնը մեծ առաւելութիւն ունի: Բայց կարծի վաճառականները գոյգէ չը կարողանան այդ գործը կատարել, հարկաւոր է, որ ալքսանդրոպոլիցիներն էլ միանան և կազմեն մի ուժեղ ընկերութիւն:

Ասացէք, ինչպէս վարվի աղջիկը. թոյլ կը տանք, որ օրիորդը դիմի երիտասարդին և ասի՝ արի՛նձ տար, ես քեզ շատ եմ հաւանում և գերադասում բոլորից: Ի՞նչ կարող ենք կամ իրաւունք ունենք նրանցից պահանջներ, երբ նրանց առջև միայն երկու ճանապարհ ենք թողել՝ կամ մարդու գնալ, կամ շարունակ բեռը լինել ընտանիքի վրին, և նրանք ստիպված ընտրում են երկու չարքից փոքրագինը: Իրաւունք ունենք արդեօք նրանց դատաւարաւորել, երբ երիտասարդներն աւելի ազատ լինելով ընտրութեան մէջ՝ դարձեալ ձգտում են դէպի հարուստը և կամ միայն 50 տարեկանին մօտենալուց են մտածում ամուսնանալու, այն էլ անպատճառ ջանք օրիորդի վրա: Քանի մարդ կարող է քցոյց տալ, օրինակ, Աստարիւսում, որը իր ժամանակին լինել ամուսնացած, կամ կարող էր անուսնել մէկին, որը ամուսնանալիս՝ առաջնակարգ նշանակութիւն չը լինէր տուած փողին: Արդ՝ եթէ տղամարդիկ այսպէս են, ինչ իրաւունքով ենք օրիորդները հակառակը պահանջում: «Հանքի խախտում» էր այն ժամանակի արդիւնքը, որ ինչի աչքի չի աղկնում:

Մ. Տէր-Ջաքարեանից

ՆԱՄԱԿ ՎԱՍԻԿԱՅԻՆՑ

Սեպտեմբերի 23-ին

Անցեալ տարվայ գոյութիւնները կրկին վերսկսվեցին միայն այն դաժնադրութեամբ, որ անցեալ տարի գոյատևում էին փոքր ի շատէ միջոց ունեցող գիւղացիների անասունները և իրենք, իսկ այս տարի սկսել են աղքատներից գոյատևել: Մի քանի օր առաջ գիւղերով գողերը մըտել էին մի աղքատ վարդապետացու մօտ, որը ամուսնական օժանդակութիւն էր ստանում: Բարեկրթական ընկերութեան տեղական ճիւղից և դրանով միայն պահպանում իր գոյութիւնը, և, տանը ոչինչ չը գտնելով, տարել էին խեղճի ար-խաղը և ոտքերի չուտերը: Մի երկու օր յետոյ մտել էին նրա եղբոր, նոյնպէս աղքատ, որդու տունը և տարել էին տան մէջ եղած մի հատիկ ձեռք անկողինը և այլ իրեր: Դրանից մի քանի օր յետոյ տարել էին մի խեղճ գիւղացու մի հատիկ կովը, իսկ անցեալ չարաթ տարել էին Հուլիսի մէջ վաճառելու: 13 հատ ընտիր կովեր, թողնելով գոմում միայն նիհարները և հիւանդները: Վեհափառի խիստ կարգադրութեամբ Հուլիսի մէջ վաճառել կոմերը գտնելուց քրդերի մէջ և գտնելու ու բերող քրդերը առատ վարձատրութիւն ստացան Վեհափառից, թէ և մինչև այսօր էլ գողերը չեն գտնվում և ոչ մի միջոց էլ չէ գործադրվում մեղաւորներին բռնելու և պատժելու... իսկ մնացած գողութիւնները դեռ ծածկված են և չեն գտնվում: Մեղադրել այս գողութիւնների համար միայն գիւղական տանուտէրին, որ միանգամայն ան-

Պետրոս Բէրբերեան

Մ Ա Ք Ո Ւ

Մարտի գաւառը Ատրպատականի հիւսիս-արևմտեան՝ անկիւնագիծն է կազմում մի կողմից Ռուսաստանին և միւս կողմից Քիւրբրայի սահմանակից: Մարտի գաւառը Պարսկաստանում բոլորովին առանձնացած մի երկիր է, պետութեան մէջ առանձին մի պետութիւն, բընակչիները մեծ մասամբ թուրքեր և քրդեր, այստեղ է գտնվում Հայաստանի ամենաշահաւոր վանքերից միս ու Փաղէս առաքելաւորայժմ վրկված իր նախկին չեղդութիւնից: Վանքի մօտ կայ իր սեփական գիւղը, որի բնահանութեան վաճառք է կատարում: Այս գաւառում է Տղմուտ գետը, Աւարայր դաշտը, Մաստրոկի դաշտը, Արշակունի աւերակները: Մարտի Պարսկաստանի կենտրոնի կամ միւս գաւառների հետ հեռադարձում, փոստային ոչ մի յարաբերութիւն չունի. այստեղով է անցնում Քիւրբրայից դէպի Պարսկաստան տանող տրանզիտի ճանապարհը: Մարտի բոլոր թուրք և քրդերնալ գիւղերում եկեղեցիներին, վանքերին, բերքերին, քաղաքի աւերակներ, խաչքարձաններ կան. մասնագիտական բնակչիներն անդադար այդ յիշատակարանները ոչնչացնելու ետեւից են, բայց ամեն մի ճանապարհորդ իսկոյն նկատում է, որ այս երկիրը հոռւին հայերի սեփականութիւնն է եղել և նրանցով բնակված:

Խօսել Մարտի մասին և երկար կանգ չառնել ու Քաղէի վանքի վրա, անիրաւութիւն կը լինէր: Վանքը Աւարայր դաշտի հիւսիս արե-

տարեք է և միջոցների չէ դիմում գողութեան առաջն առնելու, մեր ցանկութիւնից դուրս է, քանի որ գիւղաւոր մեղաւորները նրանք են, որոնք գիւղերապահներ պէտք է տան՝ գիւղը պահելու համար, բայց չեն տալիս, իսկ երբ գողութիւնների համար բողոք է ուղարկվում նահանգապետին, որանք, տանուտէրի խաթրը շահելու համար, հերքում են գողութիւնները և մեղադրում բողոք տուողներին... Ահա թէ ինչու է մեղանում գողութիւնը օր օրի վրա աւելանում:

Ամսիս 20-ին նշանակված էր հասարակական ժողով ընտրելու Վարդապետի հասարակութեան համար տանուտէր, օգնականներ և գիւղական դատաւորներ: Ժողովին ներկայ էին հասարակութեան կէս մասից աւելի, մօտ 6—700 գիւղացիներ: Պաշտօնատար անձանց տգիտութեան և անընդունակութեան պատճառով, ժողովը կառավարում էր գաւառապետի օգնական պ. Միկիլիսի, որ իր ընդունակութեան և բարութեան չնորհիւ վայելում է մեր գաւառի բոլոր գիւղացիների առանձին համակրանքը ու յարգանքը: Ժողովին պաշտօնի համար այս անգամ պէտք է ընտրվելին նաև երկու երիտասարդներ՝ պ. պ. Ա. Օհանջանեանց և Ս. Փոթեանց, բայց որովհետև սրանց ընտրվելու պաշտպանողներ թիւը բաւական չատ էր, ուստի հենքից մի երկուսը, աղիւղութիւն ձեռք բերելու ցանկութեամբ, վերջինը տուեցին Օհանջանեանցի տուփը, աւարկելով, որ ազնուականները իրաւունք չունեն ընտրվել գիւղական տանուտէրի պաշտօնի համար: Տեսնելով այս ապօրինի վարմունքը, ժողոված ամբիւր հրաժարվել վարմունքից, ընտրութեան և անմիջապէս դուրս եկաւ ժողովից, որի պատճառով և անկարելի եղաւ ժողովը շարունակել և ընտրութիւն կայացնել: Հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ մեր հասարակութեան բոլոր վեց գիւղերը, ի նկատի առնելով գիւղական օրէնսդրութեան (сельское положение) 89 յօդուածի բացատրութիւնը, ուր պարզորոշ ասված է որ՝ ընտրվել և ընտրվել կարող են նաև ազնուականները, և մի խնդրով դիմել են պ. Նահանգապետին, խնդրելով թոյլ տալ Օհանջանեանցին ընտրվելու:

ՆԱՄԱԿ ԷԶՄԻՍՏԵՆՑ

Սեպտեմբերի 7-ին

Հին ժամանակից էլ միմյանի մայր ակնոց մի սովորութիւն ունի, որ մինչև այսօր էլ պահպանվում է և բաւական նպաստում երկրագործ գիւղացուն՝ վախճառների ձեռքը չընկնելու: Զարաբախտաբար, վերջինքն մի քանի սրբապաշտներ, երբի զի յարգաւոր թախանձահայ վախճառու աղաների, աշխատում էին այդ օգտակար սովորութիւնը վերացնել և ազատվել մոտորումն է, Մաքու Բերդաւանի հարաւային կողմը 7 ժամ հեռաւորութեամբ՝ այդ բոլոր աւերակների մէջ 16 դարեայ պատկառելի մի հնութիւն, որ պատիւ է բերում հայ ժողովրդի ջերմեանդրութեան: Վանքի պարսկի տակից հոսում է Մաքուի գետի մի օժանդակ վտակ: Տեսարի շինութիւնը նորոգվել է հայոց 978 թւին: Զարաբախ եպիսկոպոսի առաջնորդութեան օրով, շինութեան նախկին թաւանին անցյալ է: Սակայն ամենապատկառելի և մեծածախս շէնքը գաւթին է, որ հայոց 1267 թւին է շինվել: Վանքը շարունակ ենթարկվել է բըրդական յարձակումների, և ժամանակը վերջի 10—15 տարիների ընթացքում, երբ քրդերի յարաբերութիւնները վատացան հայերի հետ: Առաջ ունեցել է հողային մեծ հարստութիւն, օսմանեան և պարսից վեհապետներից չնորհված: Վերջին տարիները ձեռնարկութիւն եղաւ վանքում ուսումնարան հաստատել, գաղութականներ բնակեցնել, սակայն քաղաքական պատճառներ արգելք եղան, և այժմ անխնամ դրութեան մէջ մնում է:

Այս կողմերում քաղաք չը լինելու պատճառով Մաքու քաղաք է համարվում. ունի բերդ, այստեղ էր նստում գաւառի լիազօր կառավարիչ: Նախկաւոր Թէմուր խանը որ միանձնաւ տէր էր. այժմ իր որդին է, որ քաղաքամար աւելի թիւղ կառավարութիւն ունի: Մաքուն շինված է Փղըր-Մախիս ստորոտում 50 վերստ հեռաւորութեան վրա, մօտ 400 տուն ժողովուրդ ունի, որից 78 տունը հայեր են, մնացեալները թուրք, հայերն ունին մի եկեղեցի ու Վարդան անունով և մի բնահայ. ուսումնարան գոյութիւն չունի: Հայերն կառավարել են մեծ մասամբ Հին-Բայազիդից, կան նաև կարնեցիներ, որոնք առեւտրով են զբաղված. բնակչութեան մեծ մասը արհեստաւորներ են, գլխաւորապէս գիւղացիներ, որոնք խաների համար ձրի աշխատ-

իւրանց խաղաղ կեանքը վրդովող և խանգարող ինդրատուները: Սովորութեան այս ձևը կայանում է նրանում, որ վանքը ամեն տարի իր շտեմարանից փոխարինարար ցորեն է տալիս այն երկրագործ գիւղացիներին, որոնք ցորենի կարիք են զգում և փող չեն ունենում ձմեռվայ կիսին կամ գարնանը կրկնապատիկ գնով ցորեն գնելու և, մինչև նոր ցորենի հասնելը, իրանց գոյութիւնը պահպանելու: Օգնութեան են դիմում գլխաւորապէս վանքապետական գիւղերի բնակիչները՝ առանց կրօնի խորութեան: Աչքի անցնելով օգնութեան դիմողների և օգնութիւն ստացողների ցուցակը, տեսնում ենք, որ երէկվայ ապահով գիւղացին, որ դեռ երկկ խաղաղներով ցորեն, բամբակ և դարի էր վաճառ հանում և աղքատներին ու ցորեն չունեցողներին լիացնում, այսօր կարօտ է հացի և ուրիշ օգնութեան է դիմում: Այսպիսիների թիւը ոչ թէ մի քանի հատ է, ոչ թէ 10—20 հատ, այլ հարիւրներով կարելի է հաշուել: Ինչն է այս երեւոյթի պատճառը, ինչն է այն հանգամանքը, որ սովորում է մեր գիւղացուն օրէցօր անանկանալ և հազիւ հազ պահպանել իր գոյութիւնը: Ահա մի հարց, որ սերտ կերպով կապված է մեր երկրագործ գիւղացու այժմեան անհաւանաւելի վիճակի հետ:

Մի կողմ թողնելով հող մշակելու նախնական ձևն ու սովորութիւնը, վախճառների կեղեքումն ու հարստահարումը և գիւղական պաշտօնատար անձանց անողորմ և անխնայ կաշառակերութիւնը, մենք կարծի ենք համարում կանգ առնել գլխաւորապէս ջրի պակասութեան վրա, որը՝ մեր կարծիքով, ամենապատկառն պատճառն է, որն է մեր գաւառի վերաբերմամբ, որ ստիպում է գիւղացուն զրկվել իր ապահով վիճակից և աւելի քան 8 ամեայ դառն աշխատանքից յետոյ՝ ձեռք մեկնել ուրիշին: Շատ գիւղացիներ գտնողաւորում են հողի պակասութեան վրա: Մեր գաւառը ևս ունի նոյն կարիքը, բայց ոչ այն չափով, որ չափով կարիք է զգում ջրի մէջ: Մեր գաւառի գիւղացիների միակ և ամենապատկառն մտածմունքն աւարկան ջրի պահպանութեան մասին է, որի պատճառով նա ոչ թէ միայն չէ կարողանում իր շուրջը գտնված պարաւոր կետեւտին անմշակ հողերից օգտվել, այլ նոյն իսկ չէ կարողանում համայնից ստացած իր մաս հողը ամբողջովին ցանել և մշակել, որովհետև ջրի պակասութեան պատճառով ցանք սերը չորանում են և չեն տալիս այն օգուտը, որը յարկ ենք, որը սպասում էր: Գեռնից գիւղացին համոզված է, որ անձրև չը գալը երկնքի պատիւ է, որով Աստուած կամենում է քաւել տալ գիւղացու մեղքերը, ուստի նա լուռ ու մուռն տանում է ձերկնքի բարկութիւնը: Նոյն կարծիքն են և տափարակ տեղերի գիւղացիները, որոնց ցանքները երկնքի անողութեւնը արդիւն չեն թողնում, այլ ուռովում են գետերի ջրերով,

տեղուց ձանձրացել են: Իրանց տարաւորվել, աւելուելու ձևով թիւրքերից չեն գնապանվում, լեզուն միայն յայտնում է իրանց հայ լինելը: Հետաքրքրական է Մաքուի ստացարանը, ուր ստացքը ամառն են պատրաստում: Քաղաքից երկու վերստ դէպի արևելք կայ մի բառաժայռ: Որ ունի ծակեր, որոնցից գոյուր է փչում առանձնաձև. այդ ծակից դէմը շինվել է լիճ, ուր սառնամանիքից ստացել է ստացվում: Մի ուրիշ տեղում նոյնպիսի ծակերից ձմրան ցորեն տալով թիւն է արտաշնչում: Այս երկրորդները Մասեայ ստորերկրայ գաղտնիքներ են, որոնք բացատրութիւն երկրաբաններին է մնում:

Մաքուից դէպի արևմուտք 15 վերստ հեռաւորութեան վրա է Քիւրբայ թէփէ գիւղը 67 տուն հայ բնակչով, զբաղվում են երկրագործութեամբ, ունին եկեղեցի և 2 քահանայ, մի ուսուցիչ: Թէ և այս ընդարձակ դաւանի մէջ հայեր բնի են և ամենից աւելի աւարակաբարձ ժողովուրդների դրացի, բայց չեն նեղվում, որովհետև խաները պաշտպանում են հայերին՝ իբրև արդիւնաւէտ տարրի, քանի որ թուրքերն ու քրդերը իրանց ծուրութեամբ և անչորհրդութեամբ մեծ օգուտ չեն տալիս իրանց տեղերին:

Դաւանի արևելեան կողմը, Սրասիսի ափին, գտնվում է ս. Ստեփաննոսի Նախավայրի հռուչակաւոր վանքը անչուր. գրութեան մէջ Վանքապետական է քիչ հեռուն գտնվող Դարաքամը հայաբնակ գիւղը, բնակիչները աղքատ և ողորմելի, վայրենի դրացիների հարստահարութիւնների ենթակայ: Նախավայրի վանքը վանահայր ունի, բայց ուսումնական հաստատութիւն ոչ: Մաքուի բերդերը՝ Հայկաբերդը, ձէլալը, Արուսիքը Քիւրբայից մեծ քանակութեամբ աւար բերին կոտորածների միջոցին, նաև բաւական թիւով կանաք և աղբիւններ, որոնց մեծ մասը վերադարձեց Գարէնի Քահիր խանը: (Արարատ):

որոնք նորմալ պահանջներ են, երբ անձրևները չեն գալիս» Եւ այս պայմանները մէջ չը կայ մէկը, որ հասկացնէր գիւղացուն, թէ դա Աստուծո թաղանթները չէ և երկրները ոչ մի վրէժ չունին լուծելու, այլ դա մեր տղիտութեան հետեւանքն է, որ չենք կարողանում օգտուել բնութեան բարեկեցութեան և սպասում ենք այդ օգնութիւնը երկրից... Ձր կայ մէկը, որ հասկացնէր գիւղացուն, որ եթէ Արագածի լանջը ամբողջովին ծածկվի անտառներով, և եթէ արաւի համար ջրի պահեստներ չկան, խոր ձորերի առաջը ամուր պատնէշ քաշելով, այն ժամանակ անձրևը չուտ-չուտ կը դայ, ջրերը կը շատանան և գիւղացիները զրկված չեն լինի իրանց հողերի առատ բերքից և կը ստանան ոչ թէ միայն այժմեան ստացածի կրկնապատիկը և աւելին, այլ և աղաւթներ կը ցանեն նոյն իսկ փոքրամասն հողի վրա այնպիսի բոյներ, որոնք կրկնապատիկ և եռապատիկ աւելի թանկ կարծենան, քան այսօրվայ ստացած բերքը: Այսպիսի մի օրոգակար դործ սկսելու համար հարկաւոր են մի երկու հեղինակաւոր և աղիւնիկ անձնաւորութիւններ, որոնք եթէ գործի զուտ անցնեն, համոզված ենք, հարցը լուծված և մեր գիւղացին ապահովված կը լինի: Դարձնում ենք այս հարցի վրա մեր գաւառապետի ուշադրութիւնը: Ա. Օհանջանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԻՆԵՐ

Մենք արդէն հաղորդեցինք, որ «Մշակութեան» խմբագրութիւնը պիտի սկսէր Արթուր Սարգսի մասին լուրն ստանալուն պէս գրելու Արթուրի պոլիտեխնիկումի վարչութեան, ինչպէս իր հարկաւոր կարգադրութիւններն անել տալ հանդուգնալի մարմինը Հոֆմանի ֆիլի Քիլիսի փոխարեւոր համար: Պոլիտեխնիկումի վարչութիւնը, ըստ նախապայարարական դործողութիւնների կատարելով և ստանալով ուսուցիչ կառավարութիւնից, ուսուցիչ դասաւանդատան միջոցով, հարկաւոր թղթաւորութիւնը՝ Արթուր Սարգսի մարմինը Ռուսաստան փոխադրելու մասին, ծանապարհ դրեց հանդուգնալի մարմինը՝ զոտուած և ցինկի դադարում: Հոֆմանի ֆիլի, սեպտեմբերի 16-ին՝ Կոնի, Բերլինի, Փորի, Ալեքսանդրով-Ալեքսանդրովի և Օդեսայի վրայով: Գաղաղին ուղեկցում էր հանդուգնալի աշակերտներից մէկը, կոլկասեցի Խոսեփանի, Արթուրի պոլիտեխնիկումի ուսանող: Ստացված է և կառավարչապետի թղթաւորութիւնը: Սեպտեմբերի 28-ին հանդուգնալի մարմինը հասաւ Բաթում, որտեղից երկաթուղով գնացելով բերվեց Քիլիս երկի, սեպտեմբերի 29-ին, երկուշաբթի ժամը 8 և 22 րոպէսին, ու անմիջապէս փոխադրվեց Խոսեփանի գերեզմանատունը: Սեպտեմբերի 29-ին խմբագրութեան խմբագրութեան համաձայն, նրա թաղարւմը կը կատարվի համեստ կերպով, առանց աւելորդ չքերի: Սյր պատճառով «Մշակութեան» խմբագրութիւնը պարտք է համարում յայտնել, որ պատկերներ չեն ընդունվելու, այլ միայն թարմ ծաղիկներ կարող են սփռել դադարի վրա ցանկացողները:

Պետերբուրգից հեռագրում են «Новое Обозрение» լրագրին սեպտեմբերի 27-ից. «Новое Время» հաղորդում է, որ, չնորհի ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան արդիւնաբերական գործունեւորութեան կառավարիչ Անտոյի եւ Կոնստանտին Կապուստինի, երկուսն էլ երկրապետի պ. Արտուրի, որ յանձն է առել ձրիապէս պատուաստել ծաղիկ:

Թիֆլիսում վերջին շաբաթները սկսել է տաքանքը ծաղիկ հիւսնորութիւնը: Մանաւանդ սաստիկ կերպով նա երևացել է Խոսեփանի թաղում: Փաղաքային բժիշկ Պրոքորովիկի կարգադրել է պատուաստել թաղի երեխաներին ծաղիկ և աղաւթով նախապահպանել նրանց հիւսնորութիւնը: Բժիշկ Պրոքորովիկուն օգնում է երկրապետի պ. Արտուրի, որ յանձն է առել ձրիապէս պատուաստել ծաղիկ:

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան կենտրոնական վարչութեան մէջ շուտով կական բարեփոխութիւններ կը մտցնվեն: Ինչպէս յայտնի է, ներկայումս միջնորդութիւնը զարկն է անում լուսաւորութեան զարգացման, ժողովրդական լուսաւորութեան զարգացման, արդիւնաբերական գործունեւորութեան զարգացման կոմիտէի երեք ստորաբաժաններով, այն է՝ տեխնիկական, պրոֆեսիոնալ կրթութեան և ժողովրդական ընթերցանութեան համար հրատարակվող գրքերի համար: Բարեփոխութիւնները զիստապաշար վերաբերում են ժողովրդական լուսաւորութեան զարգացման, որի մի քանի բաժինները պէտք է ընդարձակվեն և բացի

դրանից պէտք է հաստատվի միջնորդի առանձին դիւանատուն:

Թիֆլիսի քաղաքային դուման իր սեպտեմբերի 28-ի նիստում որոշեց ընտրել մի յատուկ յանձնաժողով, որ պէտք է նախապատրաստութիւններ տեսնի ձրիապէս ընդունելու Բեղիկական ընկերութիւնից և ձրիապէս տնտեսութիւնը կազմակերպելու՝ յետ գնելուց յետոյ: Թանձնաժողովի անդամներ ընտրվեցին երեք ձայնաւորներ՝ պ. պ. Վեցկի, Տիգրանով և Յակիմով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐԻԶՈՒՄ

Պարիզի Վազրամ դաշինքում չը կայացած միտնիկ մասին լրագրները հետեւալ մանրամասնութիւններն են հաղորդում: Այդ միտնիքը կազմակերպել էին Դեյվիդի գործի վերաբերյալ իրենց կողմնակիցները՝ Պրէսման, Մորգալ, Օգոստ Միրք, Հոյ Մենիէ և Վազան: Առաջին երկուսը, ինչպէս յայտնի է, «Temps» լրագրի խմբագիրներն են, իսկ վերջինը «L'Aurore» լրագրի հրատարակիչը: Միտնիքը նշանակված էր ժողովի դատաւարութեան երկրորդ օրը: Արդէն առաւօտեան ժամը 11-ից սկսած ամբողջ սկսեց հաւաքվել Վազրամի փողոցը, բայց ժամը 12-ին, երբ միտնիքի կազմակերպողներն եկան, Վազրամի դաշինքի դուռը փակ գտան և մուտքն էլ չըջապատված բազմաթիւ ոստիկաններով: Պրէսմանէն պահանջեց, որ իրան թող տան մտնել դաշինք, սակայն, որ ինքը վարձել է դաշինք, բայց ոստիկանութեան գործակալ պատասխանեց. «Վարձել էք դաշինք թէ ոչ, այդ չը գիտեմ, բայց նրա տէրը մերժում է բանալ դուռը և ժողովը չէ կարող կայանալ: Այդ բանակցութիւնները ժամանակ ամբողջ՝ «Կեցցէ վերաբերյալ», «Կեցցէ Պիկար», «Կեցցէ Պիկար» ոստիկանութեան ներսում: Պրէսմանէն, Վազանից հետեւալ, բայց նրանք մերժեցին: Ամբողջ սկսեց հայոյն ոստիկանութեան և նոյն իսկ բուռնեցը գործ դնել. ոստիկանները յետ քննելու ամբողջ և բազմաթիւ ձերբակալութիւններ արին: Պրէսմանէ, Մորգալ և Վազան նոյնպէս ձերբակալվեցին ու տարվեցին մօտակալ ոստիկանատուն: Նրանց հետեւում էին համախոհներ, գոաւով՝ «Կեցցէ վերաբերյալ»: Դրանից յետոյ շուտով Վազրամ փողոցը հասաւ Դերուէզը, հարկաւոր մարդկանց ուղեկցութեամբ, զինուորական դաւադաններով: Նրանք աղաղակում էին՝ «Կեցցէ զօրքը»: Նա եկել էր խափանելու միտնիքը. ոստիկանները նրան յայտնեցին, որ միտնիքը չը կայացաւ: Այն ժամանակ Դերուէզը կանգնեց իր կառնուած և ճառ խօսեց ամբողջին, բայց աղաւթի պատճառով ճառը չէր լսվում: Նա հրամայեց կառավարին քնել կառնը Վազրամի փողոցով, բարեկամները աշխատում էին գտնել այդ փողոցի վրա մի տուն, որի պատշգամբից Դերուէզը կարողանար ճառ խօսել, բայց ի դուր: Դերուէզը դնաց ոստիկանատուն, որի մուտքի մօտ խռոված էր ամբողջը և գոռում էր՝ «Կեցցէ Դերուէզ, կեցցէ զօրքը, կեցցէ վերաբերյալ», «Կեցցէ Պիկար», և «Կեցցէ զօրքը», «Կեցցէ Պիկար»: Հակառակորդները բուռնեցան և դաւադաններ էին գործածում. ոստիկանութիւնը շատերին կալաւորեց: Հակադրեց փութակաւորները բուռնեցին մի քանի անցնող զինուորներ և նստեցնելով իրանց ուսերի վրա, սկսեցին պոքոք աղաղակելով՝ «Vive l'armée! Consuevez Zola»: Վերապէս ժամը 4-ի դէմ, ամբողջ սկսեց ցրվել: Բաժանվելով առանձին խմբերի, ցրց անցնողները ուղղվեցին քաղաքի նաղան ուղղութեամբ. ամեն մի փողոցում ցրցեց և ընդհարումներ կրկնվում էին: Լուրջ անկարգութիւններ տեսի ունեցան Հատման թուղթարում, ուր մի խումբ սկսեց պոքալ՝ «Կեցցէ թագաւոր»: Ելինեան դաշտում, Օսմանլիում և մանաւանդ Սէն-Լազարի փողոցի առաջ վերաբերյալ կողմնակիցները և հակառակորդները խկական կռիւ սարքեցին, որի ժամանակ շատերը վիրաւորվեցին: Ծանր վիրաւորվածների թիւը 50-ից աւելի է: Վազրամ փողոցում խռոված բազմութիւնը 20,000-ի էր շանտում:

Վերաբերյալի կողմնակիցները օրգանները հաւատացնում են՝ նախ՝ ոստիկանութիւնը ամեն տեղ գործում էր միաբան հակառակորդների հետ. երկրորդ՝ որ հակառակորդների մէջ կային շատ բանաւաններ և երկրապետական գործունեւոր շաղկերներ:

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հռոմից ստացված տեղեկութիւններից երևում է, որ Թուրքիան, ստանալով չորս պետութիւնների վերջնադրը, չէ կարող ընդդիմանալ նրանց միաբան պահանջին և կը հանէ իր գործերը Կրետէից, որովհետեւ Գերմանիան և Աւստրիան, թէ չը ստորագրեցին վերջնադրը, բայց խորհուրդ են տալիս Թուրքիային կատարել պետութիւնների պահանջը: Միւս կողմից «HOBOT» լրագրի թղթակիցը հետեւալն է գրում Կ. Պոլսից. «Գերմանիայի աղիւնիկները աւելի ևս մեծացաւ այն ժամանակից, երբ Գերմանիայի զաւթակիցները խնդրեցին նրան նորից մըտնել եւրօպական կոնցրեստի մէջ, որ կարգադրում է Կրետէի գործերը և երբ Գերմանիան մերժեց իր զաւթակիցների այդ խնդրեցը: Հէնց որ Կ. Պոլսում իմացան այդ բանը, իսկոյն չնորակալութեան հետագիւր ուղարկեցին Բերլին, հետագիւր, որ ամենաուղեւորված բնաւորութիւն ունէր: Պետութիւնների մոտադրութիւնները Կրետէի վերաբերմամբ սուլթանի շահերին դէմ են համարվում և ոտնակոխ են անում նրա իրաւունքները. ուստի Գերմանիայի բացասական պատասխանը ընդունվում է իբրեւ ապացոյց նրա բարեկամական յարաբերութիւնների դէպի Թուրքիան: Մի և նոյն ժամանակ Գերմանիան, որպէս պատասխան իրաւաց կառավարութիւնից իր ստացած չնորակալութեան, հարկաւոր համարեց յայտնել Բ. Կրան իր հայեացքը այն առաջարկութեան վերաբերմամբ, որ արել է ուսուցիչ կառավարութիւնը զինաթափութեան մասին: Գերմանական կառավարութեան կարծիքով, որ յայտնված է Բ. Կրան, կոնֆերանցիան ոչ մի արդիւնք չի առաջացնի. ուստի Գերմանիան հարկաւոր միջոցներ ձեռք կառնի և խորհուրդ է տալիս Թուրքիային՝ վարելով նոյնպէս, այսինքն շարունակել իր զինաւորումը այնքան, որքան նա այդ կարեւոր է համարում իր ապահովութեան համար: Այս խորհուրդները, որոնք ստացված են Բերլինից, ի հարկէ, հարկաւոր տպաւորութիւնը գործեցին Եղեղ-Բեռլինում: Օսմանեան պաշտօնակալ շրջաններում ենթադրում են, որ կոնֆերանցիայի համար պատրաստված հողը արդէն քանդված է և կօնֆերանցիան կը ցրվի, արտասանելով մի քանի ծածկած ֆրագներ այն զգացմունքների մասին, որոնք զեկաւարում էին ժողով դոմարողներին»:

Ինչպէս պիտի չորս պետութիւնները հարկաւոր Թուրքիային կատարել իրանց պահանջը: Բանակցութիւնների ժամանակ խօսք է եղել, որ եւրօպական զօրքերը կրակ սկսեն թիւրք զօրքերի դէմ, եթէ սրանք չը հեռանան կղզուց: Բայց Ռուսաստանը չէ հաւանել այս առաջարկութեանը: Անգլիական լրագրները հաղորդում են և այն, որ Ջեկալ-Փաշան մի հեռագիր ուղարկեց Կանդիայի նահանգապետին և հաւատացնում է նրան որ անհիմն է այն լուրը, թէ թիւրքաց զօրքերը պիտի հեռանան Կրետէից:

ԶԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Հեռագիրը հաղորդեց որ Պեկինում բրիտանական դեսպանութեան անդամ Մորտիմորին ամբողջ անպատուեց, գցելով նրա վրա քարեր և ցին այն ժամանակ, երբ նա վերադառնում էր դեսպանատանից իր կնոջ հետ: Ամերիկական միտնիքները և ամերիկական դեսպանութեան քարտուղարն էլ ենթադրեցան նոյն վիճակին: Փարտուղարի կողմ ջարդված է: Անգլիական և ամերիկական նաւատորմներին հրամայված է պատրաստ լինել: Մի և նոյն ժամանակ Չինաստանում բոլորվում է ապստամբութիւնը: Ապստամբները հետեւալ յայտարարութիւնը.

«Յայտարարութիւն: Այսպէս է զրված երկրքում Նո, Չանգ, Հունգ-Սուն-Տունգի դուրս և հրամանատար, պիտի վերադառնա երկրից բոլոր օտարերկրացիներին և ոչնչացնեմ բոլոր շարագործութիւնները: Չինաստանում Բարբարոս եւրօպացիները շատ զօրեղ են իրանց տանը և նախ՝ են մեր երկրին, ինչպէս առկուծ որսին: Նրանք կամենում են անկախել կերպով և խորամանկութեամբ տիրանալ մեր երկրին: Չինաստանում մի տեղ չը կայ, ուր նրանք չը փորձէին հաստատվել. և նրանք փող չեն խնայում»:

Տասը տարի առաջ մեզ մօտ եկան օտարերկրացի միսիոնարներ և առում էին ժողովրդին, որ նա դէն գցէ հին աստուածներին. իրանց թոյնը նրանք տարածեցին ամբողջ երկրում: Օտարերկրացիները իրանք են կառավարում իրանց գործերը և փող են գողանում. նրանք կողոպտում են երկիրը: Դրա հետ միասին օտարերկրացիները աղան և զոռելի մարդիկ են: Աստուած և ժողովուրդը, երկիրը և երկիր ոտքի կենեն նրանց դէմ և չեն թող տալ նրանց: Ձեր բարեկամները և ձեզ օգնութիւն հասցնելու դիմակի տակ նրանք գրաւում են ձեր վստահութիւնը, իսկ յետոյ խաբում են ձեզ և ձեռք են գցում ձեր երկիրը:

«Նա վրդովված եմ պաշտօնատար անձանց չահախորդութիւնից: Նրանք օտարերկրացիների դէմ ոչինչ չեն անում. նրանք չինացիներին բանտ են նստացնում և օտարերկրացիների պահանջմամբ սպանում են: Մանդարինները ժողովրդին նախ՝ են ինչպէս հիւն միջատներին: Երկրի հրամանով, համարձակ և քաջ մարդիկ պիտի դրօշակի տակ հաւաքվեն. հարուստները պիտի դռնեն իրանց կարողութիւնը ժողովրդի բարօրութեան համար: Մենք 30,000 զինուոր ունենք, որոնք քաջ են վազրների նման: Նա տարածում են այս յայտարարութիւնը երկրում, որպէս զի ամենքն իմանան, թէ ինչի եմ ձգտում ես և օգնեն ինձ: Իմ բոլոր զինուորները լաւ կրթված են և հնազանդվում են օրէնքին. և ես հրամայում եմ ոչ թէ երկրւոյ, այլ սիրով: Ով ինձ ընդդիմանայ, նա կը սպանվի»:

Չինական իշխանութիւնները հաւատացնում են, թէ ապստամբութիւնը ծնւած է. բայց իսկապէս հրեւը դեռ նոր է բռնկվում: Իշխանութիւնները բաւականաճում են նրանով, որ բռնում են անմեղ մարդկանց և անթիւաբար պատժում նրանց:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, սեպտեմբերի 20-ին
Հերիք է որ մի անգամ աչքերդ չուռ տաք Թաւրիզից հեռու Ատրպատականի մոտացված անկիւնները. ինչ տխուր երեւոյթներ չէք պատահիլ... հաղաբարոս հայեր զուրկ որ և է տարրական միջնորդութիւնից անգամ... Տնտեսական տաղանդ, արհեստական սով, սե հացի կարօտութիւն և մոգի ու հոգու մեռնողի բացարձակ բացակայութիւն: Վերջին ամիսները Ուրմից և շրջակայից լսված հայերի մասին տեղեկութիւնները չափազանց սրտաճմիրկ են: Այդ կողմերում ապրող 1200 տնիք աւելի հայ ազգաբնակչութիւնը զուրկ է միանգամայն նիւթական վիճակից, մեծ մասամբ մարմնի լեզուից, կրօնական միջնորդութիւնից և որ ամենապաշտին է՝ կրթական հաստատութիւններից: Բարանդուղ գաւառական կողմից վերջին մէջ հայ բանակայ չը գտնվելուն համար շատ անգամ ծնվածների և մեռածների արարողութիւնը օտարադաւան ատրիների ձեռքով է կատարվում. և շատ անգամ մեռնողները ներկում են ու առանց կարգի թաղվում: Ատրպատականի նախկին առաջնորդներն ամենին ուշադրութիւն անդամ չէին նուիրում այդ կողմերին, ուր տառապում են խորունկ թշուառութեան մէջ 10,000-ից աւելի երկուս. հայ բազմութիւն: Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ուղղված տեղեկագրիներն ու աղերանները արձագանք գրտան յիշեալ ընկերութեան զեկաւար տիկիւնների սրտերում: Այդ ընկերութեան բազմաշխատ վարչութիւնը՝ առանց մոտիկ տալու իր նիւթական անձուկ միջոցին, դուրս եկաւ իր կանոնադրի սահմանափակ շրջանակից, իսկ արաւ և վճռեց ներկայ 1898/99 ուսում. տարվանից բաց անել Ուրմիի հայաբնակ գիւղերում երկու գիւղական ուսումնարան, որոց բացմանը կաջակցեն Ատրպատականի թեմակալ առաջնորդը և Սալմաստի փոխ-առաջնորդը: Թաւրիզի Հայուհեաց ընկերութեան յարգելի վարչութիւնը ուսումնարաններին համար 2 արժանաւոր ուսուցիչ արդէն վարձել և ուղարկել է: Ընկերութիւնը տարեկան այդ ուսումնարանների համար յատկացրել է ծախս այս տարվայ համար մօտ 600 ռուբլի: Այնիւ տիկիւնների այս բայը մեծ չնորհալարութեան արժանի լինելուց բացի, արժանի է նաև այն մարդուէր անձինքների օժանդակութեան, որոնք պարտք են համարում գիւրդեան ձեռք մեկնել, գիտութեան ու լուսոյ կայծը տալ թշուառութեան գոհներին: Թաւրիզի Հայուհեաց ընկերութիւնը այս տարի նպատտ տուաւ 400 թուամս Լիւաւ թաղի ուսումնարաններին. 5 տարվայ համար տարեկան 30 թուամս տալիս է Թաւրիզից 30 վերստ հեռու Մուսաբար գիւղի նորաբաց ուսումնարանին, պահելով մի և նոյն ժամանակ Թաւրիզում կար ու ձեռի արհեստանոց, մանկապարտէզ և գորգի գործարան»:

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13